Երկուշաբթի, 7 Փետրուար, 2011

Տէրունական Աղօթք

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս։ Ամէն։

Սաղմոս 119

ՊԻՏԻ ԳՈՐԾԱԴՐԵՄ ԱՍՏՈՒԾՈՅՍ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ

Կ'ատեմ կեղծաւոր մարդիկը,
եւ կը սիրեմ Օրէնքդ։
Ապաւէնս եւ պաշտպանս ես դուն,
քու խօսքիդ վստահած եմ։
Հեռացէ՛ք ինձմէ, դուք՝ չարագործներ,
որպէսզի կարենամ իմ Աստուծոյս
պատուէրները կատարել։
Օգնէ՛ ինծի, որ կեանք ունենամ՝ ինչպէս խոստացար,
որպէսզի իմ վստահութեանս մէջ յուսախաբ չըլլամ։
Օգնէ՛ ինծի, որ փրկուիմ,
եւ տեւաբար կանոններուդ վրայ խորհիմ։
Դուն կը մերժես բոլոր անոնք
որ կը խոտորին կանոններէդ.
արդարեւ զուր են անոնց հնարքները։
Կեղտ կը համարես երկրի բոլոր ամբարիշտները.
ահա թէ ինչու՝ կը սիրեմ պատուիրաններդ։
Մարմինս կը սոսկայ քու վախէդ,
եւ կը սարսափիմ վճիռներէդ։
Փառք, պատիւ եւ երկրպագութիւն քեզի,
յաւիտեանէ մինչեւ յաւիտեանս։ Ամէն։

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՕԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն։
Եւ հիւանդաց բժշկութիւն, նեղեցելոց ազատութիւն։
Արի Աստուած հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա։

Աղօթք

Օրհնեալ ես, Տէր Աստուած, մեր փրկիչը, որ ամէն ժամանակ մեզի հետ ես,
եւ երբէք Քու ձեռքէդ չես ձգեր զանոնք, որ հաւատքով եւ ճշմարտութեամբ Քեզի կ'աղօթեն։
Կ'աղաչենք եւ կը խնդրենք Քեզմէ, Տէր, Քու ծառաներուդ ճամբորդակից եղիր,
Քու հսկողութեամբդ պահելով խաղաղութեան մէջ.
եւ առաջնորդէ մեզի խաղաղութեամբ եւ ուրախութեամբ նորէն հասնելու մեր բնակարանները,
մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որուն կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։
Ամէն։

ՕՐՈՒԱՆ ՆԻԹ

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
Գլխ. 5 (Շար.)

«Դուք էք երկրի աղը»:
Երկիր ըսելով կը հասկցուի ամբողջ աշխարհը, այլ խօսքով՝ մարդկութիւնը: Աստուած այնքան սիրեց աշխարհը, մարդկութիւնը (Յովհ 3.16):

Աղին յատկութիւնները:
Համ տուող: Այս պարագային աշխարհին համ տուող եւ աշխարհին համը տուողը, այսինքն աշխարհին, կեանքին իմաստ, նշանակութիւն եւ արժէք տուող: Այն ժամանակահատուածը, որուն մէջ կ'ապրէին մարդիկ, երբ այլեւս կ'անդրադառնային թէ կուռքերը սուտ են եւ ոչինչութիւնը, ահա այդ վիճակին դիմաց, քրիստոնէական վարդապետութիւնը կու գար մարդոց կեանքին մէջ արթնութիւն բերելու, մարդոց կեանքին իմաստ, նշանակութիւն բերելու եւ իսկական կեանքին գեղեցկութիւնը:
Մաքրութեան նշան, նաեւ սրբութեան կոչում: Մաքրութիւնը այն բարոյական մաքրութան մասին է խօսքը, որ Քրիստոս կը բերէ իր հետ, եւ այդ ապրելակերպը կ'ուզէ փոխանցել իրենիններուն, որպէսզի անոնք եւս ուրիշներուն կեանքերը եւս մաքրեն:
Պահպանումի նշան: Քրիստոս երբ իր առաջին աշակերտները կանչեց, անոնք արդէն գործի վրայ էին՝ ձուկ կ'որսային եւ ուռկան կը կարէին: Անոր մէջ տեսանք մարդիկը որսալ, շահիլ, բայց նաեւ այդ շահուածը պահել, պահպանել: Այս պատկերին մէջ մենք կը տեսնենք Եկեղեցւոյ դերը, իբրեւ ուռկան, որուն պարտականութիւնն է նաեւ բարեկարգ վիճակի մը մէջ պահել նաեւ հաւատացեալները, այլ խօսքով՝ խնամել, նորոգել, հոգ տանիլ մինչեւ արքայութիւն:
Ուխտի եւ հաւատարմութեան նշան: Անոնք որոնք պիտի պահուին, նաեւ անոնք են, որ իրենց ուխտը եւ հաւատարմութիւնը մինչեւ վերջ կը պահեն Աստուծոյ հետ: Հաւատարմութիւն ըսելով կը հասկնանք Աստուծոյ օրէնքին եւ պատուիրաններուն նկատմամբ հնազանդութիւն:
«Դուք էք»: Ովքեր են «դուք էք»: Առաջին հերթին առաքեալները, եկեղեցւոյ մէջ նշանակուած բոլոր հովիւները, բոլոր անոնք որոնք Աստուծոյ հօտին պահպանութեան պարտականութիւնը ունին: Տակաւին, քիչ մըն ալ անդին երթալով, ամէն մէկ քրիստոնեայ իր կարողութեամբ եւ պատրաստակամութեամբ կոչուած է նոյն դերը ունենալու խօսքով, ու մանաւանդ կեանքի օրինակով:

«Դուք էք աշխարհի լոյսը»:
Լոյսին դերը:
Մաքրութիւն, սրբութիւն
Գիտութիւն
Յոյս
Կեանք
Հին Կտակարանին մէջ Աստուած լոյսի կոչումը տուաւ իր ժողովուրդին՝ Իսրայէլին հեթանոս ազգերուն մէջ:
Երկրորդ, Մեսիան ինք պիտի դառնար այդ լոյսը, «եւ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը աւելի սիրեցին, որովհետեւ իրենց գործերը չար էին»: «Ես եմ աշխարհի լոյսը»: Մեսիան ոչ միայն իբրեւ անձ, այլ նաեւ խտացումը Աստուծոյ ժողովուրդին:
Երրորդ, այս անգամ այդ լոյսի կոչումը եւ առաքելութիւնը իր աշակերտներուն կը վերաբերի:
Ահա այս կոչումը, որ տրուած է առաքեալներուն ինչպէս նաեւ Աստուծոյ նոր ժողովուրդին: Լոյս ըլլալու պարտականութիւնը, որպէսզի մարդիկը խաւարէն լոյսի բերեն, սատանային իշխանութենէն Աստուծոյ դարձնեն, որ կը նշանակէ ազատութիւն, փրկութիւն, մաքրութիւն եւ սրբութիւն: Ասով Աստուածգիտութեան ճանաչումը, գիտութիւնը, որմէ կը բխի նաեւ նոր կեանքի, յաւիտեանական կեանքի յոյսը:
«Քաղաք մը որ լերան վրայ շինուած է կամ կանգնած չի կրնար պահուըտիլ»:
«Ճրագը վառելէ ետք աշտանակի կամ գրուանի տակ չեն դներ»:
Քաղաք - աշակերտներ, հետեւորդներ
Ճրագ - աշակերտներ, հետեւորդներ
Լեռ - աշխարհ: Լեռ բացատրութիւնը կը նշանակէ թագաւորութիւն Եսայի 2:2-3:
Աշտանակ - աշխարհ
Խօսքին իմաստն է, ով որ Աստուծոյ թագաւորութեան մաս կը կազմէ, այդ մէկը պիտի երեւի, կարելի չէ ծածկել: Ինչպէս որ է պարագան հաւատքին. եթէ հաւատքը ունինք մեր մէջ կարելի չէ զայն պահել կամ ծածկել, այլ պէտք է երեւի, անշուշտ ոչ ցուցադրական իմաստով, այլ՝ կեանքով:
Նաեւ կարելի է հասկնալ որպէս արքայութեան պատգամը, աւետարանական բարի լուրը, Քրիստոսի բերած ճշմարտութիւնը, վարդապետութիւնը, որ կարելի չէ պահել կամ ծածկել: Հետեւաբար, այս բոլորի նպատակը, որպէսզի մեր կեանքերը իբրեւ լոյս Աստուծոյ լոյսին փառաբանութիւնը դառնայ: